

ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՍՍԿԱՆ

(Տէս Հասար ԽԳ. էջ 229-237)

Բ

ՆՇԱՆՔ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Չայնագիր սյուրենի նշաններն կը բաժնուին 'ի ձայնաւոր և 'ի բաղաձայն, սովորական գրութեան տառից պէս:

Չայնաւորներն ընդհանրապէս բառից սկիզբ

ընն և մէջտեղերն աւելի կը գտնուին քան թէ վերջը. կը գտնուին նաև երբեմն առանձինն:

Բաղաձայն գրերն՝ ձայնաւորաց հետ 'ի միասին՝ մէկ նշանով կը գրուուին:

ՉՈՏՆԱՒՈՐՔ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայերենի մէջ ձայնաւոր տառից հնչումն վեց հատ պարզ ձայնից կրնայ վերածուիլ. որոց իւր

լաքանչիւրն իրենց համապատասխանող նշաններն ունին, և են՝ ա, է, ը, ի, օ, ու:

ա	է	ը	ի	օ	ու
---	---	---	---	---	----

ԳԻՏԵԼԻՔ

Ա ձայնաւորն հնչելու համար՝ մարդուս քիմքըն արձագանգ տուող կոր ձև մը կը լանայ ստանալ, ինչպէս նաև բերանն արուեստական ձև մը կ'առնու: Դարձեալ, ա ձայնաւորն ա մէջ ձայնէ աւելի սրալոյ, դիւրին և գեղեցիկ է. ուստի նաև սրալոյ, դիւրին և գեղեցիկ նշան մը պէտք է ներկայացընէ այս ձայնը և ահա այս

խնդրեալ պայմաններն կը տեսնուին երկրաչափական կէտին վրայ. ուստի այս կէտն կը ներկայացընէ զձայնաւորն ա: — Բայց որպէս զի կարելի լինի այս նշանն ուրիշ գրերու հետ միացընել, կիտանշանն՝ իրմէ առաջ և իրմէ վերջը երկու փոքրիկ գծիկներ ունի՝ թելի նման, որ կ'ըսուին Թելագիծք: Այս գծիկներն կրկին կը լինին՝ երբ նշանն բառից սկիզբն և կամ մէջերը գտնուի. երբ առանձինն և կամ բառերու վերջը գտնուի՝ վերջնեաց թելագիծ չի կրեր:

ա	ա	ա
---	---	---

Է ձայնն հնչելու համար՝ չրթ ունը հորիզոնա կան գիրքով կ'երկայնին, և գրեթէ իրարու կը հանդիպին, թողով միայն երկայն և նոյրք միջ մը՝ յորմէ ձայնն դուրս կ'ենէ: Ուստի նաև հորիզոնական քառակ գիծ մը կը ներկայացընէ է ձայնը:


Ը ձայնին հնչումն նման է է գրին հնչման, բայց անկէ նուազ զգալի և գրեթէ համար ձայն ունի. կը գտնուի ընդհանրապէս բառից մէջտեղերը՝ բաղաձայնէ վերջը, որ և սովորաբար նիւ

թապէս չի գրուիր. բայց կը հնչուի: Ուստի նաև աւելի կարճ և նուազ զգալի նշան մը քան է ձայնին՝ կը ներկայացընէ ը տառին գրութի համար ձայնը: Այս ը տառը ներկայացընող զօանշանն՝ կը գրուի քիչ մը դէպ 'ի վեր բարձրացած աջ կողմէն, և կը ծառայէ բաղաձայն գրերը իրարու հետ միացընելու:

Ի ձայնն ամէն լեզուի ձայնաւորաց մէջ քարձրագոյն աստիճանն ունեցողն է, և է միանգամայն աւար և ազդու, և գրեթէ նրբածայր սլա

քի պէս մարդուս լռելիքը կը խայթէ. ուստի նաև յարձր, սուր և նրբածայր նշան մը կը հա- մապատասխանէ ի ձայնին: Այս նշանն դէպ 'ի վեր գծուած ժամանակ շատ բարակ է և զրե-

թէ թելադրի չափ ծռած է. և կը կոչուի ի վե- ռել. իսկ երբ վերէն դէպ 'ի վար գծուի՝ նուազ բարակութիւն կ'ունենայ և նուազագոյն հա- կումն դէպ յաջակողմն և կը կոչուի ի վայրէջ:



Ո ձայնաւորն կ'որ հնչումն ունի, և շրթունք զայն հնչելու ատեն կը կ'որնան՝ երկու կատա- րեալ կիսաբողբոյս կազմելով. որոց մին կը ձևա- նայ վերին շրթունքէն և միւսն ստորինէն. և ստորին շրթունքէն ձևացած կիսաբողբոյս ձևն կը ծռուայ օ ձայնը նշանակելու:

Ո ի ձայնն հնչելու համար՝ շրթունք կ'եր- կայնին, կը նեղնան և ուրուսն ձև մը կ'առ- նուն. ուստի նաև ծռած և դորդած ձև մը պէտք է որ ներկայացնէ շրթանց և ձայնի այս յատկութիւնները:

Ե Ր Կ Բ Ա Ր Բ Ա Ռ Ի Բ Ս Ղ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն

Սղազորութեան մէջ երկարաբառ կը կոչուին ոչ միայն երկու ձայնից մի միայն վանկ կազմող հնչումն, այլ նաև երկու ձայնաւորաց քովէ-քով առանձնաբար հնչուիլն:

Երկարաբառք կը գրուին՝ միացընելով եր- կրորդ ձայնաւոր տառին նշանն առաջին տա- րին հետ անմիջապէս այն տեղ՝ ուր որ առաջնոյն նշանն լիննայ:

Սղազորութեան մէջ երկարաբառք երկու իւրմ- րի կրնան վերածուիլ, որ են.


1. Յատուկ երկարաբառք.

2. Միյատուկ երկարաբառք.

Յատուկ կ'ըսուին այն երկարաբառներն՝ որք ձևացած են երկու կամ երեք ձայնաւոր տառից քովէ-քով գալէն, որոց հնչումն մէկ վանկ միայն կը ձևացընէ:

Միյատուկ են այն ամէն ձայնաւոր տառից զուգութիւնք, որոց հնչումն երկու կամ աւելի վանկ կը ձևացընեն:

Յատուկ են հետևեալքն. այ, ոյ, եօ, եւ իէ:




Ասոնցմէ զատ կան նաև ուրիշ երկու յատուկ երկարաբառք՝ սա և իւ, որոց վրայ յետոյ յատ- կապէս պիտի խօսինք:

այ, ոյ, եօ, ձայներն կը գրուին իրենց այբու- բնական նշաններով՝ առանց ընդհատման:

Եւ կրկնակ ձայնը կը նշանակուի (մասնա- տրապէս բառից սկզբնագիւր եղած ատեն),

վայրէջի ձայնին հետ՝ միացընելով է ձայնը, սկզբնագիւր փոքրիկ թելագծով մը:

Միյատուկ երկարաբառներն կը գրուին իւ- բաբանչիւրն համեմատ այն ձայնից նշաններով՝ յորոց կազմուած են. զոր օրինակ հետևեալքն. այլ, այլի, այր, ոյա, ոյէ, էա, էի, էօ, էու, իի, և այլն:



Ընդհանուր կանոնով՝ ձայնաւորք և երկարա- բառք բառից սկիզբն և վերջը՝ իւրաքանչիւրն իւ- բնեց յատուկ նշանով կը զրոյմուին. իսկ բառից

մէջերը այլակերպօրէն, այսինքն՝ խորհրդա- ուր կերպով մը կը նշանակուին, ինչպէս վերջը պիտի տեսնենք:

ԲԱՂԱԶԱՅՆ Ք ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաղաձայնը առանց ձայնաւորաց հետ միա-
նալու՝ ձայն չեն կարող հանել. ուստի սղազրու-
թեան մէջ բաղաձայնը համր և ձայնէ զուրկ են:
Բաղաձայնը հնչելու գործարանաց համեմատ՝
կը բաժնուին վեց խմբի, որք են.

1. Նայք,
 2. Շշողք,
 3. Շրթնայինք,
 4. Հազազայինք,
 5. Ատամնայինք,
 6. Քմայինք:
- Իսկ իրենց փափկութեան կամ սաստկու-
թեան աստիճանին համեմատ՝ բաղաձայնը կը

ՅՈՒՅԱԿ ՆՇԱՆԱՅ											
ԱՅԲՈՒԲԵՆԻՅ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ											
ԴՅՏՈՒՄԻՑ ԲԱՂԱԶԱՅՆԻՅ	Լերկը կամ Ս ու ղը			Միջինը կամ երկարը			Թաւը կամ կրկնակը				
Շրթնայինք	պ	լ		բ	բ		փ	փ			
	վ	ւ		ֆ	ւ						
Կոկորդայինք	կ	շ		զ	ւ		ք	ւ			
	հ	շ		խ	ջ		ղ	շ			
Ատամնայինք	տ	ւ		դ	լ		ծ	փ			
	ծ	լ		ծ	լ		ց	լ			
Քմայինք	հ	ւ		չ	ւ		չ	ւ			
	ծ	ւ		չ	ւ						
Շշողք	զ	ւ		ս	ւ						
Նայք	լ	մ	շ	ն	ւ	ւ	ւ	ւ	ւ	ւ	ւ

բաժնուին երեք կարգի, և են հետևեալներն.

1. Լերկը կամ Ս ու ղը,
2. Միջինը կամ Երկարը,
3. Թաւը կամ Կրկնակը:

Բաղաձայն տառից այս ամէն բաժանումներն,
որն, իւրաքանչիւրն իրենց յատուկ սղազրական
նշաններով՝ ներկայացեալ կը տեսնուին առա-
ջիկայ ցուցակիս մէջ:

Սղազրութեան մէջ նշանագրերն կը բաժնուին երեք կարգի՝ իրենց մեծութեան համեմատ, և են՝ փոքր, Միջակ և Մեծ:

Փոքր են այն ամէն նշանագրերն՝ որք սղազրութեան Տղաշարին մէջ կը բռնեն կէս միլոնը՝ ընդ մէջ հիման և երկրորդ օժանդակ գծին:

Միջակ են այն նշանագրերն, որ ամբողջ միլոնը կը բռնեն՝ ընդ մէջ հիման և երկրորդ օժանդակ գծին:

Մեծ են այն նշանագրերն՝ որք հիմէն սկսելով՝ կ'անցնին երկրորդ օժանդակ գծին սահմանէն անդին, և կամ՝ երկրորդ օժանդակ գծէն սկսելով՝ կ'անցնին հիմնական գծէն անդին. և այս նշանագրերէն ոմանք՝ գրեթէ վերջնասահման գծերուն կը հասնին:

Այս երեք կարգ նշանագրերու բաժանումը տե՛ս Հետեւիւ ջուցակին մէջ:

Փոքր	1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9
Միջին	10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19
Մեծ	20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Ն Ա Յ Բ Ա Ղ Ա Չ Ա Յ Ն Ք

Նայ կը կոչուին այն բաղաձայններն՝ որք խօսելու ժամանակ՝ ամենասահուն երազութիւն ունին, և դիւրաւ ուրիշ գրերու հետ կը միանան:

Մ տառն հայերէն շատ բառերու մէջ ինչպէ՛ս նաեւ ուրիշ հնդեւրոպական քոյր լեզուաց մէջ՝ նախընթաց կը գտնուի Բ, պ, փ չթնակա, նաց-գոր օրինակ. անբոխ, ամպոտ, ամիսփ, և այլն:

Ն տառն ընդհակառակն նախընթաց կը գտնուի ինչպէ՛ս ուրիշ յարեթական քոյր լեզուաց՝ այսպէ՛ս նաեւ հայերենի մէջ՝ աստամական տ, ղ, ք աստից. գոր օրինակ. ժանտ, սանդ, շուք:

Լ տառն հնչելու համար՝ լեզուն կը կորանայ և ծայրն գաղարուելով՝ քնաց կը դաչի. այս չար-ժամառ ներկայացուած է սիփական նշանով մը: — Այս նշանն երբ բառերու սկիզբն գրուի՝ միայն հետեւորդ թելագիծ ունի. երբ բառերու մէջտեղը գտնուի՝ թէ՛ հետեւորդ և թէ՛ նախընթաց թելագիծ ունի. իսկ երբ բառերու վերջը գտնուի՝ իայն նախընթաց թելագիծ ունի:

Մ ձայնն հնչելու համար՝ երկու նշանութիւն պէտք է կատարենք. առաջինն մէջ շունչը ներս քաշելով, երկրորդին մէջ դուրս շնչելով. ընդ մէջ այս կրկին նշանութեանց՝ չթնակ կը մնան. ուստի նաեւ գիծ մը՝ նախընթաց և հե-

տեւորդ թելագիծներով՝ կը համապատասխանէ չրթնային այս շարժման:

Ն ձայնն հնչելու համար՝ լեզուն ալէձև կը շարժի. ուստի և ալէձև գիծ մը կը ներկայացընէ Ն ձայնը:

Բ ձայնն թրթռուն է, և միւս ամէն բաղաձայններուն հակառակ՝ հնչուած ժամանակ շունչը ներս կը քաշէ. ուստի նաեւ միւս բաղաձայններուն նշանաց դրից հակառակ նշան մը՝ այսինքն՝ դէպ ՚ի ձախ ծռած գծիկ մը՝ կը ներկայացընէ Բ ձայնը:

Ռ ձայնն՝ ըին գրեթէ կրկինն՝ լինելով՝ նոյն նշանն կրկին մեծցուած՝ կը ծառայէ Ո տառին գրութեան համար:

Շ Ո Ղ Բ Ա Ղ Ա Չ Ա Յ Ն Ք

Շնդ կ'ըսուին այն՝ բաղաձայններն՝ որք հընչուելու ժամանակին սուլելու ձայն կը հանեն:

Չ տառն շարունակեալ և անընդհատ ձայն մ'ունի. ուստի նաեւ շարունակեալ նշան մը (բոլորակն՝ երկու թելագիծով) կը ներկայացընէ զայն: — Այս նշանն կը գրուի ընդհանրապէ՛ս ձախէն դէպ յալ, և կը կոչուի ուղիղ. բայց կը գրուի նաեւ յալէն դէպ ՚ի ձախ, և այն ատեն կը կոչուի խոտոր. և կը գործածուի օին նշանին առջև և ուրիշ քանի մը դիպաց մէջ:

1 Ի տառն յառաջ եկած կ'երեւի հնագոյն ընդհանրապարտեմէն, բայց քանի մը բառից մէջ նաեւ կրկին ընդհանրապարտեմէն ցուցած է. զոր օրինակ, Գարգ և Գարգար յոյններէն մէջ Ի առժամային և երբեք անկէ:

ամանցեային մէջ, ինչպէս թերեւս նաեւ իբր արժանոյն և Գրոստ անձնանցեային մէջ, և այլն. ուստի նաեւ բանաւոր է սղազրութեան նշանաց մեծութեան մէջ՝ ձայնի նոյն համեմատութեանը յաշուել:

Ս ձայնն աւելի զօրաւոր է զէն. ուստի նոյն նշանն աւելի մեծցուցած (այսինքն՝ բոլորակին կրկին տրամագծիւ), կը ծառայէ ս ձայնին. և զին նշանին պէս թէ ուղիղ և թէ խոտոր կը դրոշմուի:

Սլազրութեանս մէջ նայ տառերն և ս պարզ շրջով՝ միանալով իրարու հետ և կամ լերկ, միջին և թաւ բաղաձայնից հետ՝ կը կազմեն յօդական կոչուած բաղաձայնները, որոց վրայ յետոյ պիտի խօսինք:

ԵՐԹՆԱՅԻՆ ԲԱՂԱՉԱՅՆՔ

Այս կարգիս կը վերաբերին այն ամէն բաղաձայններն՝ որոց հնչումն չըթանց ձեռքով կը կատարուի:

Պ բաղաձայնն կը հնչուի՝ նախ գոցելով շրթերունքներն և յետոյ արագութեամբ բանալով, երկու չըթանց մէջ մնացած բացուածքէն հանեալով ձայնը, որ և քիչ մը թրթռուն ձայն ունի. ուստի նաև կարծ գիծ մը՝ քիչ մը հակեալ և թելազգծով մը վերջացած՝ կը ծառայէ այս ձայնը նշանակելու համար:

Բ ձայնն աւելի երկար և աւելի զօրաւոր է ս ձայնէն, և նոյն կերպով կը հնչուի. ուստի նաև Բ ձայնին համար կը ծառայէ այն նշանն՝ որ կը գործածուի ս ձայնին համար. բայց միայն քիչ մ'աւելի երկայնացած և զօրացած: — Այս նշանն կրնայ թէ վերէն դէպ' ի վար գծուի (որով կը կոչուի վայրէջ), և թէ՛ վարէն դէպ' ի վեր, (որով կը կոչուի վերոյ). բայց այս երկու կերպին մէջ ևս՝ միշտ իր դիրքը հաստատուն կը պահէ. այսինքն՝ կը գծուի՝ սկսելով միշտ հիմնական գծէն քիչ մը վերով մինչև գրեթէ չորրորդ գիծը, կամ չորրորդ գծէն քիչ մը վեր սկսելով՝ միջև հիմնական գծէն քիչ մը վեր:

Փ ձայնն աւելի զօրաւոր հնչումն ունի և գրեթէ Բ ին կրկինն է. ուստի նաև Բ ին նշանն խալաձև հատմամբ վերջին թելազգծին՝ կը ծառայէ նշանակելու փ ձայնը:

Վ ձայնն հնչելու համար՝ չըթուք կը կորսնանք քան զպ ձայնն հնչելէն աւելի. ուստի նաև պ գրին նշանն՝ կոր ձև առած՝ կը ծառայէ վին ձայնը նշանակելու:

Ֆ ձայնն ևս՝ չըթնային է և կոր, բայց վին ձայնէն աւելի երկար և զօրաւոր է. ուստի վին նշանն աւելի երկար և աւելի զօրաւոր ձև առած՝ կը ներկայացնէ ֆ ձայնը:

ՀԱՐԱԳՈՍԻՆ ԲԱՂԱՉԱՅՆՔ

Հազագային կ'ըսուին այն բաղաձայններն՝ որք հազագով կամ կոկորդով կը հնչուին, ուստի կը կոչուին նաև կոկորդայինք:

Կ ձայնն կը հնչուի միջելով լեզուին կորագեալ մասը՝ քմաց առջևի մասին գէժ. ուստի

լեզուին սոյս կատարած գործը՝ կը ներկայացնէ կորացեալ ծայրով գիծ մը:

Գ ձայնն աւելի զօրաւոր է քան զվ. և լեզուն զայն հնչելու համար՝ կիսաբոլոր ձև առած՝ կը զարնուի քմաց առջևի մասին. ուստի նաև փոքրիկ կիսաբոլոր մը կը ներկայացնէ զ ձայնը:

Ք ձայնն աւելի զօրաւոր է զէն, և գրեթէ կրկին զի գործութիւն ունի. ուստի և կրկնելով երկու անգամ զ ձայնին նշանը՝ կ'առնենանք ք ձայնը:

Հ ձայնն կարճ և թիթև հազագ մի է, և կը մերձենայ զօրութեամբ յունական թաւ հազագին (ծ), որ առաից վրայ դրուելով իրենց մէջ՝ ի մեզ ընդհանրապէս Ի կը փոխուի ի Ղ յախնեաց. ուստի նաև նոյն յունական հազագին նշանն հայառակ գարձուած՝ կը ներկայացնէ մեր Ի հնչումն:

Խ ձայնն Ի հազագէն աւելի երկար և աւելի զօրաւոր է. ուստի նոյն նշանն աւելի երկարացեալ և աւելի զօրացեալ կը ծառայէ խ ձայնը դրոշմելու համար: — Մինչդեռ Ի ին նշանն երկրորդ և երրորդ գծերուն մէջ ևս՝ զած միջոց կը բռնէ, խ ին նշանն՝ երկրորդ գծէն ալ անդին կ'անցնի:

Ղ ձայնն շատ աւելի զօրաւոր է խ ձայնէն, և գրեթէ կրկին անգամ՝ աւելի զօրաւոր հազագ ունի քան զԻ. ուստի խին նշանն աւելի մեծցուցած և զօրացուցած՝ կը ծառայէ ղ ձայնին: — Այս նշանս կը գծուի՝ նախ երկրորդ գծէն վեր ելնելով մինչև առաջին ի ծին, և յետոյ վար իջնելով մինչև հիմնական գիծին:

ԱՍՄՆԱՅԻՆ ԲԱՂԱՉԱՅՆՔ

Այս խմբիս կը վերաբերին այն ամէն տառերն՝ որք ատամանց օգնութեամբ կը հնչուին:

Տ ձայնն հանելու համար՝ լեզուն կը զարնուի ատամանց և չուտով ետ կը քաշուի. լեզուին այս գործողութիւնն կը ներկայացուի սեփական նշանով մը:

Դ ձայնն աւելի զօրաւոր է քան զՍ. և զայն հնչելու համար՝ լեզուն բռնութեամբ ատամանց կը զարնուի, կը գանգաղի նախ և ապա յանկարծական կերպով՝ ետ կը քաշուի. նաև լեզուին սոյս չարժանն կը նշանակուի իրեն յետոյ տուկ նշանով մը, որ կը համապատասխանէ յունական (γ) և կամ լատինական (y) զըրին: — Այս նշանս թէ՛ վերէն վար կը գծուի և թէ՛ վարէն վեր, և կրնայ միշտ իրեն դիրքը տես դափոխել:

Թ ձայնն շատ աւելի զօրաւոր է քան զԴ. և գրեթէ կրկին անգամ՝ աւելի հազագ ունի. ուստի Թ ձայնին նշանն խալաձև հատմամբ կը ներկայացնէ Թ ձայնը: — Այս նշանն ևս կըրնայ վերէն վար և կամ վարէն վեր գծուի. երբ վարէն դէպ' ի վեր ձգուի՝ հատումն կամ հան.

այս յօդական միութեան յաջորդ ձայնաւոր մի չիլինի. վասն զի այն ատեն երկու բաղաձայններէն մին նախընթաց վանկին հետ կը միանայ, և միւսն յաջորդ ձայնաւորին հետ վանկ կը կապուի: Զոր օրինակ. խորհուրդ բառին մէջ երկու գուգադրութիւնք կան բաղաձայնից, որ են ըրի և ըրդ. առաջինն յօդական բաղաձայն չի կազմեր, վասն զի ր ատեն կը հնչուի խո վանկին հետ

միացած, իսկ ք տուն ուրդ վանկին հետ, իսկ ըրդ գուգադրութիւնն անբաժան կը մնայ, և մէկ ձայնով ու ձայնաւորին հետ կը հնչուին ր և դ տառերն, որով կը կազմեն յօդական բաղաձայն մի: Յայց եթէ առնունք, օրինակ իմն, նոյն բառին սեռական հոլովն՝ խորհրդոյ, խոր—հոր + ույ, պիտի հընչենք զայն ըստ բաժանման վանկերուն՝ առտնէինն առանձինն՝

ՁԱՅԼՄԱՐ ԲԱՆԴՐՆԱԼ Ն՝ ՀԵՏԵՆԵԱԼՔՆ					
մը =		ամբար	բը =		բրածեծ
մպ =		ամպ	գը =		գրատուն
նծ =		ընծայ	դը =		դրացի
նծ =		խոնճիկ	պը =		պարիկ
նց =		յանցանք	վը =		վրայ
ըզ =		մարզել	տը =		տրական
ըծ =		կարծիք	ղը =		աղբիւր
ըծ =		բարձր	ոց =		աղցան
ըց =		հարցանել	մպը =		ամպրոպ
կն =		ակնարկ	մըր =		շամիրեւ

ՁԱՅԼՄԱՐ ԲԱՆԴՐՆԱԼ Ն՝ ՀԵՏԵՆԵԱԼՔՆ					
նտ =		բանտ	ըշ =		կամուրջ
նծ =		բանձար	րտ =		մարտ
նջ =		ականջ	զզ =		ազգ
րբ =		արբենալ	զկ =		զկծել
ըդ =		կարդալ	զմ =		կազմել
րց =		կարճ			

խոր, հոր, ույ, և ոչ եթէ խոր-ըրդոյ (խորըր-ըրդոյ), որ խժանայն և անիմանալի է հայտնեցաւ: Ուստի ըստ ձայնաւորին հետ կը միանայ, որ յօդական բաղաձայն մի հայերենի մէջ կը կրնայ լուծուիլ բառակազմութեան օրինօք և կամ հոլովմանց և լծորդութեանց մէջ ձայնաւորաց փոփոխմամբ կամ կորուսմամբ, և լինել պարզ բաղաձայն մի:

Ուստի լեզուաց բառակազմութեան այս օրինաց համեմատ՝ կապը պարզեցնելի որութիւնն, (որ թէպէտ և բացարձակ կերպով ձայնական հնչման վրայ հիմնեալ է, բայց է նաեւ յետին աստիճանի ռասմադրական որութիւն) երկու տեսակ բաղաձայն կը զանազանէ, որք են.

1. Հնգական կամ վանկական բաղաձայն.
2. Յօդական կամ բաղադրեալ բաղաձայն:

Երբ բաղաձայն մը վանկ ձևացընէ՝ միանալով մէկ կամ աւելի ձայնաւորի հետ՝ կ'ըսուի հետգական բաղաձայն։

Իսկ երբ երկու կամ աւելի բաղաձայնք իրարու յաջորդեն՝ առանց մէջերնին ձայնաւոր տա-

ռի՝ կը ձևացընեն յօդական բաղաձայն մը։ Մինչդեռ հետգական բաղաձայնք իրարու հետ կը միացուին փոքրիկ թելագծով մը, յօդական բաղաձայնք ընդհանառական կը կազմուին առանց թելագծի՝ մէկ նշան միայն ձևացընելով։

ՅՈՒՅՈՒՆ ԼԱՄԱՌՈՅ ՅՈՂԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ		
մը = շ	րզ = ձ	գր = շ
մպ = շ	րծ = շ	դր = շ
նծ = շ	րծ = շ	պր = շ
նծ = շ	րծ = շ	վր = շ
նց = շ	րց = շ	տր = շ
նհ = շ	րտ = շ	դց = շ
նջ = շ	զգ = շ	դը = շ
նտ = շ	զկ = շ	մպր = շ
րը = շ	զմ = շ	մրր = շ
րղ = շ	կն = շ	
րջ = շ	բր = շ	

Յօդական բաղաձայնք երկու կերպով կը կազմուին, այսինքն

1 Ձուլմամբ, որ է այլակերպութիւն մը կամ վերածումն պարզ նշանաց՝ ի մի միայն նշան։

2 Շաղկապմամբ, այսինքն՝ միացընելով

զանազան բաղաձայններու նշաններն իրարու հետ՝ առանց թելագծի։

Ձուլմամբ և Շաղկապմամբ, ինչպէս նաև բոլոր յօդական բաղաձայնները՝ կը ներկայացընեն ցուցակքն յէջ 109 և 110։

Շարունակելի

Հ. Ա. Թ.

Բ Ո Շ Ա Յ Ի

Բռնաբէ՛ր ի ճո՛ղ խառնածողով
Պետարապէտայ գընան թափառ.
Այսօր նոքա կան առ գետով
Ի վայել ծաղկոտ՝ գիշերավար։
Աղաթը զըւարթէ տիւ և գիշեր,
Եւ քռան խաղաղ ներքոյ երկնից։
Ընդ մէջ անուոց սայլիցն՝ ի վեր,
Կիրաւածուի՛ ի կապերտից,
Հուր արծարծի, անդ ընտանիք
Կազմեն ընթերիս, ի գաղտ արձակ
Արածին ձիւք, առ վայելիւք
Ընտանուան արջն կայ ի պառակ։
Աստ ամենայն հաղանալ գործի.

Սակաւապէտ հոգք ընտանեաց.
Յառաւուրս կազմէ ի յուզի,
Երգ կոնանայն և ձիւք մանկանց,
Ի տփին սայլիցն ուղղորդաց։
Ահա՛ ի ըսկըն վայական
Տիրէ լուսնիւն գիշերական,
Լըսի միայն յամայութեան
Խորիկն ձիւք և հաշիւն շան։
Ամենուրեք անցանէ լոյս,
Լուսնեակ և եթ աղօտաւոյս
Նըստեալ յերկնիցն ի կամար
Ըզընայից գիտէ զգաղար։

ՓՈՒՆԵՐՆ